ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ №156

ք. Երևան 24.01.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՇԵՆ ԴԵԿՈՐ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 08.05.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-7/4-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2024 թվականի 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 300 հատ հրշեջ դույլ: Ընկերության կողմից 2 անգամ մատակարարվել են հրշեջ դույլեր, սակայն չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական պայմաններին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. հունվարի 14-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով, որ «ՇԵՆ ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ՇԵՆ ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ